ՀԱՍԿԱՑՈՒՄԸ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՄՈՎՍԵՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Բնությունը մենք բացատրում ենք,
հոգևոր կյանքը՝ հասկանում:
Վ.Դիլթեյ

Հասկացման հիմնահարցը փիլիսոփայության մեջ կարելի է դասել այն համընդհանուր հիմնախնդիրների շարքին, որոնք առնչվում են փիլիսոփայական գրեթե բոլոր ուսմունքներին, հետևաբար առկա են փիլիսոփայական մտածողության պատմական զարգացման ողջ ընթացքում: Դա առաջին հերթին պայմանավորված է փիլիսոփայական գիտելիքի այն յուրահատկությամբ, ըստ որի՝ այդ գիտելիքի նպատակը **հասկացումն է**, ոչ թե ճշմարտությունը: Թյուրըմբռնումներից խուսափելու համար հարկ է նշել, որ ասվածը չի կարելի հասկանալ այն իմաստով, որ փիլիսոփայական գիտելիքը հեռու է ճշմարտությունից: Փիլիսոփայական գիտելիքը ձգտում է հասկացման, ինչը նշանակում է, որ այն չի սահմանափակվում գիտելիքով՝ որպես մեզ շրջապատող իրականության մասին թեկուզ և հավաստի **տեղեկությամբ**, այլ փորձում է բացահայտել իրերի և երևույթների էությունը: Այլ կերպ ասած՝ գիտելիքը միշտ իրերի և երևույթների **մասին** է, մինչդեռ հասկացումը ներկայացնում է հենց **իրերը և երևույթները:** Օրինակ՝ մարդու մասին մեր բնագիտական և հասարակագիտական ծավալուն գիտելիքը միշտ նրա **մասին** է, սակայն դրա շրջանակներում հնարավոր չէ պատասխանել «ո՞վ է մարդը» հարցին: Պատճառն այն է, որ այս հարցադրմամբ սուբյեկտը հատում է աշխարհի և իր մասին՝ գիտելիքի էությամբ պարտադրված **անհրաժեշտ** պատկերացումների սահմանը և դուրս է գալիս **ազատ հարցադրումների** ոլորտ:[1] Դրանով է պայմանավորված նաև այն, որ ինչ-ինչ հարցեր գիտական գիտելիքի շրջանակներում կարող են ոչ լեգիտիմ թվալ (օր.՝ «ինչո՞ւ ապրել», կամ «ո՞րն է գեղեցիկի չափանիշը»), բայց փիլիսոփայության համար մեծ հետաքրքրություն ներկայացնել:

Հասկացման և գիտելիքի տարբերությունը ակնհայտորեն դրսևորվում է այն պարզ ճշմարտության տեսքով, որ կարելի է «իմանալ առանց հասկանալու»: Նույնիսկ Սոկրատեսին վերագրվող՝ «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ, ի տարբերություն նրանց, ովքեր չգիտեն, որ ոչինչ

[1] Այդ մասին տե՛ս **Сидорова Л. П.** Познавательная концепция Н. А. Бердяева: экзистенциально-онтологический аспект // Вестник Нижегородского университета им. Н. И. Лобачевского. Серия «Социальные науки», 2013, № 1 (29), էջ 110-115:

չգիտեն» հայտնի արտահայտությունն ավելի հասկանալի է դառնում այն դեպքում, երբ շարադրվում է հետևյալ ձևակերպմամբ. «Ես հասկանում եմ, որ ոչինչ չգիտեմ, ի տարբերություն նրանց, ովքեր չեն հասկանում, որ ոչինչ չգիտեն»:

Հասկացման հիմնախնդիրը ոչ միայն տեսական նշանակություն ունի փիլիսոփայական վերլուծություններում, այլև դրսևորվում է մարդու գործունեության գրեթե բոլոր ոլորտներում, որովհետև մարդու կեցության և ճանաչողության հնարավորության հիմնական պայմաններից մեկը **հաղորդակցությունն** է: Վերջինս կարող է սահմանափակվել «իմանալ առանց հասկանալու» ձևաչափով, ինչը հաճախ տեղի է ունենում, օրինակ, հանրակրթության ոլորտում և հետագայում շարունակվում «գործել առանց հասկանալու» սկզբունքով:

Եթե անտիկ փիլիսոփայության մեջ հստակ սահմանազատվեցին գիտելիքը և կարծիքը, ապա հետագա դարաշրջանները ցույց տվեցին նաև գիտելիքի և հասկացման նույնացման անթույլատրելիությունը: Արդեն միջին դարերում զոյաբանական, իմացաբանական և կրոնական հարցեր քննարկելիս պարզ դարձավ, որ անհրաժեշտ է տարանջատել իմանալը հասկանալուց, քանի որ դրանց նույնացումը հղի է մեթոդաբանական լուրջ հակասություններով: Օրինակ՝ անհրաժեշտաբար պետք է դիմել փիլիսոփայական մեկնաբանությանը՝ ըմբռնելու երկու իրարամերժ՝ Անսելմ Քենթերբերացու «հավատում եմ, որ հասկանամ» և դրան Պյեռ Աբելյարի հակադրած «հասկանում եմ, որ հավատամ» թեզերի էությունը:

Հետագայում հայտնի ֆիզիկոս Պոլ Լանժևենը նույնիսկ հանգեց այն եզրակացության, որ «հասկանալն ավելի արժեքավոր է, քան իմանալը»[2]: Իսկ արդեն 20-րդ դարում այդ տարանջատման անհրաժեշտությունը զգացվեց ոչ միայն հասարակագիտության և հումանիտար գիտությունների, այլև բնագիտության ոլորտում: Մասնավորապես, քվանտային մեխանիկայի առաջացումը և նոր բացահայտումները հստակ ցույց տվեցին, որ գիտության գործը ոչ թե իմանալն է, իսկ փիլիսոփայությանը՝ հասկանալը, այլ որ հենց գիտության շրջանակներում ևս կա գիտելիքը հասկանալու խնդիր:

Թեպետ փիլիսոփայության պատմության մեջ հասկացման հիմնահարցը քննարկվել է առնվազն միջնադարից, սակայն իրավամբ հենց 20-րդ դարի փիլիսոփայությունն է այդ հիմնախնդիրը դարձրել գլխավորներից մեկը, եթե ոչ՝ ամենագլխավորը: Տարբեր դարաշրջաններում հասկացման հիմնահարցի այս կամ այն մեկնաբանությունը դառնում է այն բանալիներից մեկը, որի միջոցով կարելի է բնութագրել այդ ժամանակահատվածի փիլիսոփայության ոգին: Դա առավել ակնհայտորեն դրսևորվեց հերմենևտիկայի և փիլիսոփայության հետմո-

[2] Մեջբերումն ըստ՝ **Голованов Я.** Этюды об ученых. Молодая гвардия. М., 1976 (https://www.gumer.info/bibliotek_Buks/Science/golov/03.php, մուտքը՝ 18.02.2020թ.):

դեռնիստական հայեցակարգերի պարագայում, որոնց համար հասկացման խնդիրն առանցքայիններից է:

Հերմենևտիկայի գլխավոր սկզբունքն այն է, որ աշխարհը տրվում է մարդուն լեզվի միջոցով: Իրերն ու երևույթները, իհարկե, գոյություն ունեն լեզվից դուրս, սակայն որպես ճանաչողության օբյեկտներ նրանք հասանելի են միայն լեզվի միջոցով: Սա նշանակում է, որ գործ ունենք ոչ թե աշխարհում առկա իրերի ու երևույթների՝ լեզվում մեկընդմիշտ տրված արտահայտությունների, այլ վերջիններիս մեկնաբանությունների հետ: Սրա շնորհիվ հերմենևտիկան անհրաժեշտաբար անխզելի կապ է հաստատում հասկացման և մեկնաբանման միջև. վերջինս հանդես է գալիս որպես տեքստի իմաստային բազմազանության բացահայտում: Սակայն տեքստի ցանկացած մեկնաբանություն անխուսափելիորեն նոր իմաստներ է ներմուծում մեկնաբանվող նյութի մեջ, ինչը նշանակում է, որ տեքստի սկզբնական բովանդակության «մաքուր» վերծանումը սկզբունքորեն անհնար է, քանի որ տեքստի մեկնաբանումն իրականացվում է սուբյեկտի փորձի, գիտելիքների և նախապաշարմունքների միջոցով: Հերմենևտիկայի շրջանակներում բացահայտված այս օրինաչափությունն իրականում առկա էր արդեն Ֆ. Բեկոնի այսպես կոչված «կուռքերի» տեսությունում: Անգլիացի փիլիսոփայի մշակած գիտական ճանաչողության մեթոդը ներառում էր բանականության մաքրումը նախապաշարմունքներից կամ կուռքերից, որոնք խեղաթյուրում են իրականության արտացոլումը մտածողության մեջ:

Սակայն հերմենևտիկայի շրջանակներում այդ մոտեցումը ենթարկվեց որոշակի լրացումների և ճշգրտումների: Մասնավորապես, եթե Ֆ. Բեկոնի սկզբունքը կարող է կիրառվել բնագիտական ուսումնասիրություններում, երբ մտածողությունը գործ ունի մարդու գիտակցությունից դուրս և նրա կամքից անկախ գոյություն ունեցող օբյեկտիվ երևույթների հետ, ապա հասարակագիտական և հումանիտար ուսումնասիրություններում այն առաջացնում է նոր հիմնախնդիր, այն է՝ տեքստի (հասարակագիտական և հումանիտար հետազոտությունների օբյեկտի) հասկացումը միշտ ենթադրում է այդ տեքստի **վերստեղծում**, որն անխուսափելիորեն ներառում է սուբյեկտիվ վերաբերմունք այդ օբյեկտի նկատմամբ:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ մեկնաբանողը և նա, ով փորձում է հասկանալ, երբեք դուրս չեն գալիս «հերմենևտիկական շրջանից»[3], դեռ ավելին՝ անընդհատ ստեղծում են հերմենևտիկական նոր շրջաններ: Եթե դրանք անվերջ են, ուրեմն մենք նորովի ենք իմաստավորում ոչ միայն տեքստը, այլև տեքստի հասկացմանը մասնակցող

[3] Հասկացությունը ներմուծել է Ֆ. Շլայերմախերը մեկնաբանման և հասկացման փոխկապվածությունը նկարագրելու համար: Հերմենևտիկական շրջանը տեքստի հասկացման սկզբունք է, որը հիմնված է ամբողջի և մասի դիալեկտիկական կապի վրա (տե՛ս **Шлейермахер Ф.** Академические речи 1829 года. М., Науч. изд., 1987):

մեր սուբյեկտիվ գործոնները՝ փորձը, գիտելիքները և այլն: Այս պայմաններում տեքստի հեղինակային բովանդակությունը, այսպես ասած՝ «հեղինակի մտադրությունը» դառնում է ոչ թե ճանաչողությունն ուղղորդող հաստատուն մեծություն, այլ հասկացման բազմաթիվ տարբերակներից մեկը: Սա նշանակում է, որ տեքստի հասկացումը կախված չէ հեղինակից, նրա մտադրությունից և նպատակից, իսկ ցանկացած մեկնաբանող հասկացման ընթացքում վերածվում է այդ նույն տեքստի համահեղինակի:

Իր հերթին, քանի որ տեքստի հասկացումն անխզելի է ինքնահասկացումից, հասկացումը վերածվում է ինքնաբացահայտման, սեփական մտածողության հորիզոնի ընդլայնման: Որքան լայն է տեքստը մեկնաբանող սուբյեկտի մտահորիզոնը, այնքան ավելի շատ են նրա շփումները այլ սուբյեկտների մտահորիզոնների հետ: Այսպիսով, տեքստի հասկացումը և «ուրիշի» հասկացումը դառնում են փոխկապված և փոխպայմանավորված երևույթներ:

Ասվածը թույլ է տալիս խիստ որոշակի անհամապատասխանություն և նույնիսկ հակադրություն տեսնել հասկացման և գիտական բացատրության միջև: Գլխավոր հիմնահարցը տեքստի նշանակությունների և իմաստների բազմազանությունն է, որի հետ ցանկացած առնչություն ենթադրում է մեկնաբանություն, հասկացում, վերծանում: «Հերմենևտիկան բացահայտում է գոյության նոր ձև, որը սկզբից մինչև վերջ *մեկնաբանված կեցություն է*»[4]: Այլ կերպ ասած՝ հասկացումը խորապես ներկա է մարդու կեցությունում և վերջինիս գոյության ու մարդու հետ առնչությունների հավաստումն է:

20-րդ դարում փիլիսոփայական հերմենևտիկան փաստեց, որ հասկացման հիմնահարցը և հումանիտար հետազոտությունների ողջ մեթոդաբանությունն առհասարակ զուրկ են «հեղինակ-տեքստ-ընթերցող» եռանկյան հարաբերությունը վերլուծելու այնպիսի կայուն, անփոփոխ հաստատուններից, որոնք կարող են ընդունվել որպես ելման կետեր կամ աքսիոմներ: Միջնադարում, օրինակ, այդ «չափորոշիչի» դերը վերագրված էր Աստծուն, սակայն հերմենևտիկան՝ որպես մեկնաբանման և հասկացման արվեստ, հետագա զարգացման ընթացքում հերթականությամբ կարևորեց «հեղինակ-տեքստ-ընթերցող (մեկնաբանող)» եռամիասնության սուբյեկտներին, իսկ երբ Մ. Բուբերը և Մ. Բախտինը մեկնաբանման հիմքում դիտարկեցին նոր սկզբունքը՝ **երկխոսությունը,** վերջնականապես հաստատեց, որ նշված եռանկյան սուբյեկտներից ոչ մեկը չի կարող հավակնել ունենալու համընդհանուր նշանակություն և լինելու հասկացման մեկնակետ:

Հասկացման հիմնահարցը սահուն անցում կատարեց հերմենևտիկային հաջորդած փիլիսոփայական մի քանի ուղղությունների մեջ, որոնցից հարկ է առանձնացնել դեկոնստրուկտիվիզմը: Հերմենևտիկա-

[4] **Рикёр П.** Конфликт интерпретаций. Очерки о герменевтике. М., 1995, с. 16.

կան եռանկյան մեջ նոր հաստատունների փնտրտուքը, ինչպես և անկնալվում էր, մեկնաբանման կամ հասկացման նոր սուբյեկտ գտնելու հնարավորություններ չէր ենթադրում, ինչից բխում էր, որ պետք է «հաղթահարել» եռանկյունը, դուրս գալ դրա սահմաններից, այլ կերպ ասած՝ ենթարկել եռանկյունը դեկոնստրուկցիայի: Քանի որ «հեղինակ-տեքստ-ընթերցող» եռամիասնության մեջ կապող օղակը տեքստն է, որի միջոցով ապահովվում է հեղինակի և ընթերցողի (մեկնաբանողի) հարաբերությունը, բացառված չէր, որ դրան առաջնային կամ գերակա նշանակություն տալով՝ հնարավոր լիներ ձեռք բերել հումանիտար հետազոտության նոր մեթոդաբանություն կամ նման հեռանկար:

Այս նոր մոտեցումը դրսևորվեց պոստստրուկտուրալիզմի և հետարդիականության փիլիսոփայական հայեցակարգի մեջ, որոնց հեղինակները (Ժ. Դերրիդա, Ռ. Բարտ, Ժ. Լական և այլք) հանգում են այն գաղափարին, որ աշխարհը տեքստ է, որի հեղինակը հայտնի չէ կամ էական չէ այն վերլուծելու և հասկանալու համար: Այս հաշվարկման համակարգում միջսուբյեկտային հարաբերությունները փոխարինվում են միջտեքստային հարաբերություններով, որոնց համակարգում տեքստն արդեն ոչ թե հեղինակին և ընթերցողին կապող օղակ է, այլ իմաստային կենտրոն, որը միևնույն ժամանակ կտրվելով և՛ հեղինակից, և՛ մեկնաբանող-հասկացողից, կորցնում է իր տեղը նրանց միջև և դառնում շարժուն ու անորոշ մի բան, որն այլևս իմաստ ու նշանակություն է ձեռք բերում միայն այս կամ այն մեկնաբանության շնորհիվ:

Ազատվելով թե՛ հեղինակի, թե՛ հասկացողի կողմից պարտադրվող իմաստային ծանրաբեռնվածությունից՝ տեքստը «թոթափում» է նաև իր խորքային, էական իմաստները, որոնք դրել էր հեղինակը կամ փնտրում էր ընթերցողը: Բայց քանի որ այդ իմաստները կազմում են տեքստի բովանդակությունը, այս դեպքում գործ ունենք տեքստի բովանդակազրկման հետ, ինչից հետո երբեմնի իմաստալից տեքստը հանդես է գալիս որպես նշանների համակարգ:

Եթե նախորդ տարբերակում տեքստը կազմող նշաններն ունեին հստակ դասավորություն՝ հերթականություն և տրամաբանություն, որոնցով ապահովվում էր տեքստի իմաստային բովանդակությունը, ապա վերջինիս նշանակության ստորադասման պայմաններում առաջանում է նշանների դասավորությունը ցանկացած կերպ խառնելու և նշանային նոր կարգ ստանալու հնարավորություն: Ընդ որում, նշանների տեղափոխությունը (վերադասավորումը) նույնպես չի ենթարկվում որևէ ընդհանուր սկզբունքի կամ պահանջի, ինչն ուղղակիորեն մատնացույց է անում տեքստի մեկնաբանման նոր տարրի՝ **խաղի** ներմուծման մասին:

Եվ իրոք, եթե մեկնաբանման և հասկացման տարբերակները ոչ թե սահմանափակված են հեղինակի կամ ընթերցողի փորձով, նպատակներով, օբյեկտիվ և սուբյեկտիվ այլ գործոններով, այլ կախված են

տեքստի նշանները վերադասավորելուց, ապա ոչինչ չի խանգարում ազատորեն օգտվելու այդ հնարավորությունից և տեքստի ընթերցումը վերածելու խաղի: Քանի որ նշաններն այլևս չեն արտահայտում նախապես սահմանված որևէ փաստ կամ իրողություն, ուրեմն տեքստն իր խաղային մեկնաբանություններում դառնում է ազատ:

Հետարդիականության փիլիսոփայության մեջ արմատավորված այս մոտեցումը կարող է ընկալվել որպես ծայրահեղ սուբյեկտիվիզմ և կամայապաշտություն (վոլյունտարիզմ), սակայն այն իրականում ունի որոշակի ուղղվածություն և թիրախ: Խնդիրն այն է, որ հետարդիականության այս սկզբունքը ոչ թե իռացիոնալ է, այլ հակառացիոնալ և ուղղված է տեքստի (իրականության) ընդհանուր և միասնական հասկացման դեմ: Միասնականի վերացումն այս համատեքստում միօրինակ հասկացման պարտադրանքի փոխարեն հետապնդում է բազմապիսի մեկնաբանությունների հնարավորության հաստատումը, ինչը ենթադրում է մեկնաբանման գործիքների շարքում բանականության հետ զուգահեռ այլ մեթոդների դիտարկում ևս (օր.՝ ինտուիցիա):

Ինչպես նշվեց, հետարդիականության փիլիսոփայության ելակետերից մեկը ընդհանուր իմաստների դեկոնստրուկցիան (ապակառուցարկումն) է: Միևնույն ժամանակ, ընդհանուրի վերացման հետ զուգահեռ, վերանում է առաջնային իմաստի և բովանդակության կրողի հարցը, իսկ դրա փոխարեն ի հայտ է գալիս ոչ թե եզակի մեկնաբանությունը (որովհետև ընդհանուրը եզակի լինելու իր հավակնությունով ապալեգիտիմացնում է նաև եզակին որպես միակ), այլ մասնավոր մեկնաբանումը: Սրա շնորհիվ՝ բազում մասնավորների առկայությամբ ապահովվում է նաև տեքստի իմաստավորման բազմազանությունը: Ժան-Ֆրանսուա Լիոտարն այս առիթով նշում է, որ հետարդիականությունը անվստահություն է մետաիմաստների նկատմամբ[5]:

Հետարդիականության մարդը, փաստորեն, մերժելով աշխարհի և իր կյանքի մասին պատմող տեքստերի եզակի մեկնաբանումը հօգուտ մասնավոր հասկացման, որն իրականացվում է խաղի կանոններով, այդքանով հանդերձ, այսպես ասած, «անլրջացնում» է ճանաչողությունը: Հետևաբար, վերջինս այլևս չի հետապնդում աշխարհը փոփոխելու (նաև նկարագրելու կամ փրկելու) նպատակ: Փոխարենը հետարդիականության մշակույթը և գիտատեխնիկական առաջընթացն ապահովում են բազմաթիվ միկրոաշխարհների (հաղորդակցության և ինքնադրսևորման միկրոմիջավայրների) գոյության պայմաններ, և ժամանակակից մարդը միայն ընտրում է այդ միջավայրներից ավելի հարմարավետը: Դրա համար անհրաժեշտ է ոչ թե աշխարհի նպատակաուղղված իմացություն, այլ նախնառաջ ինքնաճանաչողություն: Այդպես իրականությունը՝ որպես հսկայական տեքստ, ներքաշվում է մասնավոր

[5] Տե՛ս **Жан-Франсуа Лиотар.** Состояние постмодерна. М. - СПб., Издательство "Алетейя", էջ 10:

ինքնամեկնաբանությունների մեջ և ոչ թե պատմում իր մասին (ինչպես ենթադրում է Մ. Հայդեգերի «լեզուն կեցության տունն է» միտքը), այլ պատասխանում անհատի մասնավոր հարցերին և դիմումներին՝ առաջարկելով նրան հնարավորությունների և հեռանկարների արդեն առկա անսահման բազմազանություն:

Ասվածը նշանակում է, որ գիտության և փիլիսոփայության լեզուն կորցնում է իր մենաշնորհային դիրքերը աշխարհի ու մարդու մեկնաբանության հարցում և նույնպես հայտնվում դեկոնստրուկցիայի ազդեցության տակ: Բազմաթիվ տեքստերի և դրանց ավելի մեծաքանակ մեկնաբանությունների պայմաններում իմաստը կորցնում է իր եզակիությունը, ճշմարտությունը՝ իր արժեքը: Մասնագիտական գրականության մեջ այս իրավիճակը նկարագրվում է «տեքստն ընդդեմ իմաստի»[6] բանաձևով, որով բնութագրվում է հետարդիականության մարդու ճանաչողական գործունեությունը, որի շրջանակներում նախապատվությունը տրվում է ոչ թե տեքստում (ճանաչողության օբյեկտում) արտացոլված իմաստների հասկացմանը, այլ մեկնաբանության ընթացքում նոր տեքստերի ստեղծմանը:

Այսպիսով, եթե ոչ թե տեքստն է պարունակում իմաստ, այլ վերջինս վերագրվում է տեքստին, ուրեմն այս կերպ կարող են մեկնաբանվել ոչ միայն փիլիսոփայական և գեղարվեստական տեքստերը, այլև պատմությունը, արվեստը, տնտեսագիտությունը և այլն: Եվ քանի որ այդ մեկնաբանությունները սկզբունքորեն անհաշվելի են և ժամանակի ընթացքում միայն ավելանում են՝ իրենց հետ բերելով նոր իմաստային շերտեր, և իրականությունը վերածում անճանաչելի խճանկարի, հասկացումը այս պայմաններում վերածվում է սեփական «ես»-ը գտնելու կամ վերագտնելու գործընթացի: Քանի որ հումանիտար գիտություններն իրենց «հասկացող» մեթոդաբանությամբ (որը տարբերվում է բնագիտության «նկարագրող» մեթոդաբանությունից) այդ նույն հետարդիականության մշակույթի մաս են և ենթարկվում են դրա տրամաբանությանը, հետևաբար չկա և չի կարող լինել «միակ ճշմարիտ» մեկնաբանություն այն պայմաններում, երբ հեղինակը չկա, ընթերցողը տարրալուծված է տեքստի, իսկ տեքստը՝ վիրտուալ իրականության «հիպերտեքստի» մեջ[7]:

Բայց «միակ ճշմարիտ» մեկնաբանության կորուստը միակ հիմնախնդիրը չէ: Քանի որ տեղեկատվության ծավալները զգալիորեն մեծանում են, իսկ դրանց մեկնաբանման և հասկացման համար պահանջվող ժամանակը չի ավելանում, բայց նաև սկզբունքորեն անհնար է չմեկնաբանել և չհասկանալ, մարդ ստիպված զոհաբերում է **իմաստային խորությունը**: Ընկալման մակերեսայնությունն իր հերթին ճա-

---

[6] **Феррони В.В.** Философская проблема понимания: от классики до современности // Вестник Воронежского государственного университета. Серия: «Философия». 2014 № 2, с. 64.

[7] Տե՛ս նույն տեղը, էջ 70:

նաչող սուբյեկտից պահանջում է ոչ թե խոր գիտելիքներ և մտավոր ճիգեր, այլ ընդամենը արձագանք եղած տեքստերին: «Մինչ գրերի գյուտը մարդիկ լսում և հավատում էին, գրերի ժամանակ՝ կարդում և մտածում, իսկ այսօր՝ գրում և պատասխանում»[8]: Այնպես, որ հասկացման ենթակա տեքստեր ստեղծում են սկզբունքորեն բոլորը՝ և՛ գրողները, և՛ ընթերցողները, որոնք մեկնաբանելիս իրենց հերթին դառնում են գրող: Երևի թե արդարացված կարելի է համարել այն ենթադրությունը, որ նման պայմաններում որևէ հեղինակ չի կարող հավակնել «լինել հասկացված»: Հնարավոր առավելագույնը «լինելն» է, ինչի համար անհրաժեշտ է ստեղծել տեքստ՝ որպես որևէ այլ տեքստի պատասխան:

Կարելի է եզրակացնել, որ հասկացման հիմնախնդրի փիլիսոփայական վերլուծությունը հիմնվում է այդ երևույթի համընդհանուր լինելու հանգամանքի վրա, ինչը դրսևորվում է մարդու գործունեության տարբեր ձևերում և մակարդակներում՝ առօրեական, ճանաչողական, հոգեբանական և այլն: Հումանիտար հետազոտության յուրահատկությունն այս կապակցությամբ այն է, որ հասկացումը մեկնաբանվում է որպես իմաստի ըմբռնում:

Հումանիտար գիտելիքն իր հերթին օժտված է հետևյալ առանձնահատկություններով, որոնց շնորհիվ հասկացումը գիտելիքների այս համակարգում առաջնային տեղ է զբաղեցնում նկարագրության նկատմամբ.

ա. կախվածությունը սոցիոմշակութային գործոններից, ինչի շնորհիվ հիմնական մեթոդներն ուղղված են օբյեկտի մեկնաբանությանը, որն առաջացնում է այսպես կոչված «արժեքային» ճանաչողություն,

բ. հումանիտար գիտությունների ուսումնասիրության օբյեկտը ոչ թե կոնկրետ իրերի ու երևույթների, այլ մարդու աշխարհն է, որը նշանային-իմաստային է,

գ. հասկացումը սոցիալական իրականության հետ հաղորդակցության հիմնական ձևերից է,

դ. հումանիտար ճանաչողության օբյեկտներից մեկը իմաստն է, որն արտածվում է տեքստի մեկնաբանման միջոցով:

Աշխարհում գոյություն ունեցող իրերից յուրաքանչյուրի հետ կարող են առնչվել անթիվ իմաստներ, որոնք հենց հումանիտար հետազոտության նպատակն են: Այդ իմաստների հասկացումը կարող է մեկնաբանվել նաև որպես **անհատական կեցության ձևավորման միջոց** այնքանով, որքանով հասկացումը տեքստի կառուցման և իմաստի վերծանման **անհատական փորձ** է: Քանի որ հասկացումն առավելապես անհատական, մասնավոր երևույթ է, այն սկսում է կորցնել իր իմաստաստեղծ նշանակությունը մարդկային մեծ խմբերի պարագայում, այլ կերպ ասած՝ եթե անհատն ազատ է տեքստը մեկնաբանելու հարցում, ապա էթնոսը, հասարակությունը կամ անգամ համայնքը

[8] Նույն տեղում, էջ 74:

պարտադրված են ընդունելու արդեն գոյություն ունեցող որևէ մեկնաբանություն: Թերևս նաև սրանով կարելի է բացատրել զանգվածային գիտակցության կարծրատիպային և ոչ ռեֆլեքսիվ բնույթը:

Հասկացումը նաև անհատական կեցության տարածության ընդլայնման միջոց է, եթե հաշվի առնենք, որ հիմնված է այնպիսի երևույթների վրա, ինչպիսիք են անդրադարձը (ռեֆլեքսիան) և հետաքրքրությունը: Դրանց շնորհիվ են ճանաչող սուբյեկտի մեջ առաջանում նոր հարցադրումներ, որոնք դրդում են նոր իմաստներ բացահայտելու: Տարածությունն այս համատեքստում չունի ֆիզիկական չափում, քանի որ մեր գիտակցության բովանդակությունն է, որը կարող է ընդլայնվել մարդու գործունեության շնորհիվ: Այդ տարածության սահմանն անցնում է «ես»-ի և «ոչ ես»-ի միջև, բայց այն իմաստով, որ «ոչ ես»-ը որևէ իրականության մասին պատմող ու դեռևս չհասկացված, չյուրացված, չհաղթահարված տեքստն է:

Այս տեսակետից էական տարբերություն կա գիտելիքի և հասկացման միջև. գիտելիքում, պատկերավոր ասած, օբյեկտը «պատմում» է իր մասին, մինչդեռ հասկացման պարագայում մենք ենք պատմում օբյեկտի մասին: Այլ կերպ ասած՝ գիտելիքը պարտադրված է, իսկ հասկացումը ենթադրում է ազատություն: Իսկ այն, որ հասկացումը հատուկ է աշխարհի առավելապես փիլիսոփայական յուրացմանը, ընդգծված է Ն. Բերդյաևի հետևյալ մտքում. «Բոլոր ժամանակներում փիլիսոփաները տարբեր կերպ պաշտպանել են իրենց ինքնուրույնությունը և դիմադրել են աշխարհի տրվածությանը՝ ասելով, որ իրենց ճանաչողության նպատակն ազատությունն է, ոչ թե բնությունը, ոգին է, ոչ թե մատերիան, արժեքն է, ոչ թե իրականությունը, իմաստն է, ոչ թե անհրաժեշտությունը, էությունն է, ոչ թե երևացողը: Փիլիսոփայությունը, ինչպես և ստեղծագործական ցանկացած ակտ, ուղղված է այնկողմնայինին, տրվածության սահմանն անցնելուն: Փիլիսոփայությունը չի հավատում, որ աշխարհն այնպիսին է, ինչպիսին մեզ անհրաժեշտաբար պարտադրված է»[9]:

Հենց փիլիսոփայական անդրադարձի շնորհիվ է օբյեկտի ճանաչողության ընթացքում ապահովվում նաև սուբյեկտի ինքնաճանաչողությունը երկխոսության, մեկնաբանության և հասկացման միջոցով, իսկ այդ ընթացքում հայտնվող իմաստները երբեք ամբողջական և վերջնական չեն, քանի որ պայմանավորված են սուբյեկտի՝ այդ պահի հետաքրքրություններով, շարժառիթներով և նպատակներով:

Բանալի բառեր – *հասկացում, գիտելիք, անդրադարձ, ճանաչողություն, աշխարհի յուրացում, իմաստ, մեկնաբանություն, անհրաժեշտություն, ազատություն, հերմենևտիկա*

[9] **Бердяев Н**. Смысл творчества. М., 1989, с. 275.

МОВСЕС ДЕМИРЧЯН – *Понимание в системе философского знания.* – В статье исследуются, кроме прочего, развитие представлений о понимании в истории философской мысли. Объектом исследования является философское осмысление действительности, субъектом – понимание текста. Утверждается разница между научным и философским постижением реальности. Цель науки – истина, в то время как цель философии – понимание. В знании объект рассказывает о себе, а в понимании человек рассказывает об объекте. С этой точки зрения понимание есть форма очеловеченного знания, дающего не только рациональное, но и духовное постижение реальности.

Особое место уделено герменевтике, в рамках которой понимание и текст рассматривались в ряду главных объектов гуманитарного исследования. Известный герменевтический треугольник «автор – текст – читатель» есть универсальная форма понимания текстов. На примере эволюции герменевтических исследований делается вывод, что в указанной схеме ни один из элементов не может претендовать на роль отправной точки понимания.

Также понимание рассмотрено как формирование пространства личностного бытия, которое имеет не физические, а существующие только в сознании границы между усвоенными и неусвоенными текстами. Понимание, таким образом, подразумевает свободную мыслительную деятельность, в чём заключается ещё одно отличие понимания от знания: мы не можем по своему усмотрению изменить знание, так как оно объективно и необходимо, но можем свободно интерпретировать тексты и создавать смыслы.

Ключевые слова: *понимание, знание, рефлексия, познание, освоение мира, смысл, трактовка, необходимость, свобода, герменевтика*

MOVSES DEMIRTSHYAN – *Understanding in the System of Philosophical Knowledge.* – The article explores the place and role of understanding in the system of philosophical knowledge, as well as the development of ideas about understanding in the history of philosophical thought. The object of this study is a philosophical understanding of reality; the subject is an understanding of the text. It is argued that there is a significant difference between scientific and philosophical comprehension of reality. The goal of science is truth, while the goal of philosophy is understanding. In knowledge an object “tells” about itself, but in understanding, a person talks about an object. From this point of view, understanding is a form of humanized knowledge, when not only rational but also spiritual comprehension of reality occurs.

In the article, special attention is given to hermeneutics, where understanding and text were considered among the main objects of humanitarian research. It is shown that the well-known hermeneutic triangle - “author - text - reader” is a universal form of understanding of texts in which reality becomes accessible to human

thinking. On the example of the evolution of hermeneutic studies it is concluded, that none of the elements in this scheme can claim to be the starting point of understanding.

Understanding is also considered as a process of forming the space of personal being, which has no physical boundaries, but only boundaries in the consciousness between learned and unknown texts. Understanding, therefore, implies free thought activity, which is another difference between understanding and knowledge: we cannot change knowledge at our discretion, since it is objective and necessary, but we can freely interpret texts and create meanings. This is due to the fact, that knowledge answers the question "What is this?", while understanding answers the question "What does this mean for me?"

Key words: *understanding, knowledge, reflection, cognition, world exploration, meaning, interpretation, necessity, freedom, hermeneutics*

Ներկայացվել է՝ 14.01.2020
Գրախոսվել է՝ 20.02.2020
Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020